

«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ ՀՀ Արարատի մարզի,
Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի
Զորավար Անդրանիկի փ. 1/1 հասցեում արևային
ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման
ՇՄԱԳ հաշվետվություն
(Լրամշակում)

«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ տնօրեն



Ա. Կարապետյան



22.07.2024թ.

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ	4
3. Օգտագործվող հապավումները	4
4. Նախնական Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ	9
6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը	10
7. Նախատեսվող գործունեության վայրը, իրականացման նպատակը	10
8. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը	11
8.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը	11
8.2 Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը	19
9. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ), շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ,	42
9.1 Շահագործման փուլ	42
9.2 Շինարարության փուլ	45
9.3 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը	49
9.4 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	52
10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)	53
10.1. Օդային ավազան	55
10.2. Ջրային ռեսուրսներ	56
10.3. Հողային ռեսուրսներ	56
10.4. Կենսաբազմազանություն	57
10.5. Թափոններ	58
10.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ	60
10.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ	62
10.8. Արտակարգ իրավիճակներ	62
10.9. Աղմուկ և թրթռում	63

10.10. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.	64
10.11. Սոցիալական ազդեցություն.	65
10.12. Լանդշաֆտ. Բարեկարգում.	66
11. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան).....	67
12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը/ Մոնիթորինգ/. ...	77
13.Բնապահպանական կառավարման պլան.....	79
14. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)	96
15. Հանրային քննարկումներ	99
16.Բողոքների ընթացակարգ.....	99
17. Նախատեսվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.	100
18. Փակման և հետփակման փուլեր.	101
Գրականություն	103

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Արարատի մարզի Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի Ջորավար Անդրանիկի փ. 1/1 հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում:
Նախաձեռնող	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
Նախաձեռնողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Դավթաշեն, Եղվարդի խճ. 111, մասնաշենք 5:
Նախաձեռնողի փաստացի գործունեության հասցեն	Արարատի մարզի Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի Ջորավար Անդրանիկի փ. 1/1
Նախագծող	«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ
Հաշվետվության նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 arm_eia@outlook.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, պետական ռեգիստրը:

Հավելված 2. Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան:

Հավելված 3. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը:

Հավելված 4. «ՀԷՑ» ՓԲԸ-ի տեխնիկական պայմանը:

Հավելված 5. Մալուխագծի, ենթակայանի, արևակայանի հատակագծերը, կոորդինատները:

Հավելված 6. Արտանետումների հաշվարկը

Հավելված 7. Արարատի համայնքապետարանի ավագանու որոշումը՝ համաձայնության վերաբերյալ:

Հավելված 8. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ:

Հավելված 9. Վճարման անդորրագիրը:

3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատում ՕԳ՝ օդային գիծ
ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր
Վտ՝ Վատտ
ՖՎ՝ ֆոտովոլտային
ՄՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կՎտ՝
կիլովատտ
ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր
ՄՎտԺ՝ մեգավատտ ժամ

4. Նախնական Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3)

Օրենք: Օրենքը կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպչի րավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության

դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործմանն ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակմանն ու կիրառմանն ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն

օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
5	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա, (Ստոկհոլմ, 22.05.2001թ)	2004	2001	2003	
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օգոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս 1998թ.)	2001	1998	2001	

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն» N 2343 - Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թ. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում :
- ❖ ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 08 նոյեմբերի 2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» N1396 որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000 Վոլտ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:
 - ❖ ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի «Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում:

5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

2023 թվականի մայիսի 3-ին ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները) Օրենքը: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի Էներգետիկայի

բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող»: Նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանը զբաղեցնում է 7,00001 հա տարածք:

«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերությանը պատկանող արևային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվել է և նախնական գնահատման հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի՝ սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 23012023-03-0042: Հավելված 1
- Գործունեության իրականացման Լիցենզիան: Հավելված 2
- Արարատի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվությունը: Հավելված 3
- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված N S-35/0077-Հ, տրված 26,05,23թ. էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը: Հավելված 4:
- Գործունեության իրականացման նախագծային փաստաթղթերը:

7. Նախատեսվող գործունեության վայրը, իրականացման նպատակը.

«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերության Արևակայանը տեղակայվելու է Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատի մարզի Լանջառ բնակավայրի վարչական տարածքում՝ Զորավար Անդրանիկի փ. 1/1 հասցեում: Հողամասի տարածքը կազմում է 7,00001 հա: Ընկերության իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք, Երևան-0054, Եղվարդի խճ.111, Դավթաշեն, մասնաշենք 5:

7.1 Նախատեսվող գործունեության նպատակը: Նախատեսվող «ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի

արևային կայանի կառուցման նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Արևային էներգիան արևի լույսի վերածումն է էլեկտրաէներգիայի՝ ուղղակիորեն օգտագործելով կա՛մ ֆոտովոլտաիկա (PV), կա՛մ անուղղակիորեն օգտագործելով կենտրոնացված արեգակնային էներգիա (CSP): Մրանցից վերջիններն օգտագործում են ոսպնյակներ կամ հայելիներ ու հետևման համակարգեր՝ արևի լույսի մեծ չափաբաժինը փոքր ճառագայթում կենտրոնացնելու համար: Ֆոտովոլտաիկան լույսը վերածում է էլեկտրական հոսանքի՝ օգտագործելով ֆոտոէֆեկտը: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024թ. մարտի 29-ի №69Ա որոշման համաձայն՝ «ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է 4500կՎտ հզորության արևային կայանի կառուցման թոյլտվություն՝ փոփոխելով նախկինում տրամադրված լիցենզիայով ամրագրված արևակայանի հզորությունը: Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան տրված է մինչև 2045թ. մայիսի 18-ը գործողության ժամկետով: Ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքն իրականացնել երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

8. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.

8.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Արևակայանը տեղակայված է լինելու «ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին Սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում՝ Արարատի մարզի Լանջառ բնակավայրի վարչական տարածքում՝ Ջորավար Անդրանիկի փ. հասցեում՝ 7.00001հա հողատարածքի վրա:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները:

«Հայր և Որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից կատարվել են տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ՝ նախատեսվող գործունեության տարածքի երկրաբանական տվյալների հավաքագրման և համապատասխան հաշվետվության կազմման նպատակով: Այդ նպատակով տարածքում փորվել են 11 հատ հորատանցքեր, յուրաքանչյուրը 3,0 գծ/մ խորությամբ: Օգտագործվել են նաև ֆոնդային տվյալները:



Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, Արաքս և Վեդի գետերի կողմը

Երկրաբանական պայմանները. երկրաբանական տեսանկյունից տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են լճագետային նստվածքներ, որոնց արտաքին շերտը ծածկված է դելյուվիալ-էլյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներով՝ որոնք ներկայացված են կավային գրունտներով:

Կլիմայական պայմանները. ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը, համապատասխան կլիմայական ցուցանիշները, քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատի մարզում: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «տաք կլիմայական շրջանում: Կլիման չոր է՝ խիստ ցամաքային: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կամում է 41 սանտիմետր:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի: Ստորերկրյա ջրերը բեռնաթաձվում են Արաքս գետը: Տեղամասում փորված հորատանցքներով գրունտային ջրերի տեղամասերը չեն բացահայտվել և ըստ ֆոնդային նյութերի տվյալների գտնվում են 10մ-ից խորը հորիզոններում:

Տիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի տարածքը գտնվում է 2-րդ (երկրորդ): Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը. Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման տվյալների՝ (գրունտների լաբորատոր հետազոտությունների) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտերը վերնից-ներքև:

Շերտ-1՝ հողաբուսական շերտ ավազակավի լցոնով: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-82-ի I (9ա) կարգ է:


Շերտ-2՝ Կավեր թույլ խոնավությամբ, գորշից մինչև դարչնա-շագանակագույն, դեղնավուն, տեղ-տեղ հանդիպում է նաև դարչնագույն և մոխրագույն տարբեր երանգների, թեթև ավազային ենթաշերտերով, փոշենման մասնիկների պարունակությամբ, մանրամիջահատիկ, հոծ՝ մանրախճի 15-20% պարունակությամբ: Էյրովիալ-Դեյրովիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-82-ի IV (10ե) կարգ է:

Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է.


- շերտ 1-ը /կավային գրունտ /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R=2.5կգ/սմ^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_p=4000 տ/մ^3$

Համաձայն UNDP-ի Հայստանում աղետների ռիսկի գնահատման իրավիճակի ուսումնասիրության՝ ներկայացվում է Հայաստանում 20 ակտիվ սողանքային տարածքների ուսումնասիրություններ: Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են սողանքային երևույթները:

Նկար 2




Նկար 3



Հայաստանի Հանրապետություն (սողանքների բաշխվածությունը)

Գլոբալ հորիզոնական ճառագայթումը Հայաստանի Հանրապետությունում

Նկար 4







Տարածքը տեղակայված է տեղակայման աշխարհագրական կոորդինատներն են.


- հյուսիսային լայնության $39^{\circ}49'21.64''N$
- արևելյան երկարության $44^{\circ}58'40.07''E$
- Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1860 մետր:

Գծապատկեր 1





Գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է Լանջառ բնակավայրը՝ 0,2կմ, Ուրցայանց բնակավայրից՝ 2,6կմ, մոտակա գետից՝ 2,6կմ, հանրապետական ավտոճանապարհից՝ 0,2կմ, տեղական ավտոճանապարհից՝ 0,7կմ, միջպետական ավտոճանապարհից՝ 0,5կմ, «Անանուն ծալքավոր ստրուկտուրա» բնության հուշարձանից՝ 1,5կմ, «Անանուն անտիկվինա ծալք» բնության հուշարձանից՝ 1,4կմ: Կից գտնվում են համայնքային և բնակիչների սեփականություն հանդիսացող հողատարածքներ:





Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Լանջառ բնակավայրի հյուսիսային մատույցներում, չկառուցապատված տարածքում: Ծառերը և ծառաթփերը բացակայում են, առկա է խոտածածկ: Տարածքն տեղ-տեղ տափարակ է, իսկ ստորին նիշերում՝ գետերի ձորակներով կտրարտված ռելիեֆ: Տարածքին բնորոշ են սևահողային ծածկույթը:

Գործունեության ենթակա տարածքում՝ ոչ համատարած առկա է խոտածածկ, բացակայում են ծառերը: Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են, երկար տարիներ օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով:

8.2. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

8.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.

ՀՀ Արարատի մարզը գտնվում է Հայաստանի հարավ-արևմուտքում: Հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին ու Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերին, հարավից՝ Նախիջևանին, հարավ-արևմուտքից՝ Թուրքիային: Մարզի հարավ-արևմտյան եզրին 6-13կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավ-արևելյան մասը: Մարզը հյուսիսից, արևելքից և հարավ-արևելքից եզրավորվում է Արագածի և Գեղամա լեռնազանգվածներով, Ուրծի



Արարատի մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառի մի մասը: Այստեղ էին գտնվում Արտաշատ և Դվին մայրաքաղաքները: Արարատի մարզը սահմանակից է Թուրքիային և Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Մարզը զբաղեցնում է 2090 կմ² տարածք՝ ՀՀ տարածքի 7%-ը: Մարզն իր մեջ ընդգրկում է Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանները՝ 4 քաղաքային և 93 գյուղական բնակավայրերով: Մարզկենտրոնը Արտաշատ քաղաքն է: Արարատի մյուս քաղաքներն են՝ Արարատը, Մասիսը և Վեդին:

Տարածաշրջանին բնորոշ են հին ծալքավորումների մնացորդները, տեղ-տեղ լճաայլուվիալ և պրոյուվիալ նստվածքների տակից երկրի մակերես են դուրս գալիս մի քանի տասնյակ մետրի հասնող բլուրների տեսքով: Տարածաշրջանին բնորոշ են հզոր, տեղ-տեղ մինչև 400 մ, լճագետային, այլուվիալ-պրոյուվիալ նստվածքները, լավային շերտերը, ձգվելով Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք հովիտը: Տարածքի ամենացածր կետը Արաքս գետի հունի մոտ է՝ 801մ, ամենաբարձրը կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555,7մ բարձրությամբ: Տարածքի բլրոտ, է մոտ 30%-ը հարթավայրային է:

Տարածաշրջանի լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով: Այն բաժանվում է երկու մասի՝ հարթավայրային և լեռնային: Հարթավայրային մասը՝ 10-15կմ լայնությամբ ձգվում է Հրազդան գետից մինչև ՀՀ Պետական սահման: Մարզի լեռնային մեծ մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի ու Երանոսի լեռները: Այստեղ առանձին կղզյակներով պահպանվում է անտառը, որը հիմնել է հայոց Խոսրով Կոտակ թագավորը, IV դարում՝ այժմ Խոսրովի արգելոցը:

8.2. 2. Մեյամիկա և երկրաբանություն


ՀՀ Արարատի մարզում առկա են սողանքային գոտիներ, որոնք կազմում են

հանրապետության սողանքային տարածքների 2,5%-ը: Սողանքային երևույթները զարգացած են հիմնականում հյուսիս-արևելյան մասի նախալեռնային բնակավայրերում՝ մոտ 3 սողանքային օջախ, ընդհանուր 13094 հա տարածքով:

Մարզը գտնվում է ոչ ակտիվ սեյսմիկ գոտում և սողանքների ակտիվացումը հիմնականում կրում է սեզոնային բնույթ կապված՝ գրունտային զանգվածների գրավիտացիոն տեղաշարժի հետ:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$:

Գծապատկեր 3



8.2.3 Կլիմա և օդային ավազան

Արարատի մարզը ծովի մակարդակից գտնվում է 800-2300մ բարձրությունների վրա: Տարածաշրջանում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը՝ չոր ցամաքային, չոր խիստ ցամաքային, չափավոր ցամաքային, բարեխառն, ցուրտ լեռնային, ձյունամերձ, պայմանավորված լեռնային մակերևույթի առանձնահատկությամբ:

Գտնվում է տաք կլիմայական գոտում, կլիման խիստ չոր ցամաքային է՝ ամառը շոգ, առավելագույն ջերմաստիճանը հաճախ բարձրանում է մինչև $+41^{\circ}C$, ձմռանը ցուրտ, անամպ, անհողմ, առավելագույն նվազագույնը ջերմաստիճանը՝ մինչև $-30^{\circ}C$: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Հաստատուն ձնածածկույթ չի ձևավորվում: Մթնոլորտային

տեղումների քանակը կազմում է 20⁰-30⁰մմ: Տարածաշրջանն ունի բարենպաստ կլիմայական գոտիներ կապված լույսի և ջերմության առատության հետ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:

Նկար 8



Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Արարատ քաղաքի համար:

Օդի ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1

ՕՐԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՋՐԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
4. Արարատ	-3.1	0.2	6.9	13.4	18.1	22.6	26.4	26.0	21.1	13.8	6.2	0.0	12.6	-31.6	42.6

Աղյուսակ 3 Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ. ա / մ. ն.	ըստ ամիսների, °C												ընդամենը
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
4. Արարատ	մ. ա.	2.1	6.0	13.5	20.1	25.1	30.2	33.7	33.5	29.0	21.8	13.3	5.1	19.5
	մ. ն.	-7.0	-4.5	1.2	7.2	11.7	15.9	19.5	18.8	13.7	7.2	0.9	-3.9	6.7

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
4. Արարատ	78	71	60	57	55	49	45	46	50	62	72	78	60	78	63	45	32

Մթնոլորտային տեղումները

Աղյուսակ 3

ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Քնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
4. Արարատ	17	18	24	36	36	21	10	7	8	18	21	17	233	97	136
	26	34	26	31	34	37	20	31	28	32	35	28	37		

Քամի

Աղյուսակ 4

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Քնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Մթնոլորտի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ				
		Միջին արագությունը, մ/վ																	
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16				
5. Արարատ	հունվար	16	3	8	18	10	5	11	29	50	1.3	Հս	2.6	ՀվԱրլ	2.7				
		1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2										
	ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2.3								
		2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8										
	հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2.3								
		2.6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0										
	հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1.5								
		2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5										

Արևափայլի տևողությունը


ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵՎԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅՅՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
13. Արտաշատ	ժ	68	95	150	160	227	287	326	302	254	189	123	72	2253
	օր	14	10	7	6	2	1	0.04	0.2	1	3	7	13	64

Նկար 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Արարատ քաղաքում քանու միջին տարեկան արագությունը կազմում է 1,7մ/վ, 25 տարվա կրկնելիությունը՝ 25մ/վ: Ամենաշոգ 25

ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է 26,8°C, բացարձակ առավելագույնը՝ 43°C, ամենացուրտ ամիսվա միջինը՝ -4,2°C, նվազագույն ջերմաստիճանը՝ -32°C: Տարեկան միջին տեղումների քանակը Արարատ քաղաքում կազմում է 233մմ, գրունտի սառչման խորությունը՝ 37սմ:

Օդային ավազան: Արարատի մարզում օդային ավազանի աղտոտումը կապված է տարեց-տարի ավելացող տրանսպորտային միջոցների, արտադրական և կենցաղային արտանետումներից, համայնքների աղբավայրերում կուտակված պոլիէթիլենային թաղանթների այրումից առաջացած թունավոր նյութերից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայացվում ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանցերի քարտեզն ըստ՝ ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2023թ. հրապարակված տեղեկագրի:

Նկար 10

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Ներկայացվում է օդային ավազանի Միջին հնգամյա կոնցենտրացիա (Ֆոն), մգ/մ³ Արարատ քաղաքի համար համաձայն՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կայք էջի.

- Ազոտի երկօքսիդ՝ 0,018մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ՝ 0,026 մգ/մ³
- Փոշի՝ 0.110 մգ/մ³

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Լանջառ բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

8.2.4 Հողային ռեսուրսներ

Արարատի մարզին հիմնականում բնորոշ են բնական կիսանապատային՝ անապատային տեղամասերով լանդշաֆտային գոտիները: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Կիսանապատային գոտին գերակայում է Արարատյան հարթավայրում, իսկ միջին բարձրության լեռներում գերակայում են չոր տափաստանային, գեղամա լեռնաշղթայի լանջերին՝ ալպյան գոտիները:

Տարածաշրջանում գերակշռում են բաց շականակագույն, գորշ, տեղ-տեղ աղակալած կիսանապատային հողերը, որոնք աստիճանաբար վերածվել են մշակովի հողերի: Կիսանապատային հողերն ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, փոշե-հատիկային ստրուկտուրայով: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Կիսանապատային գորշ հողերին բնորոշ է հումուսային հորիզոնների ոչ մեծ հզորությունը (25-40 սմ), պրոֆիլի քարքարոտությունն ու կմախքայնությունը: Պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ (հողի վերին շերտերում՝ մինչև 8-18 %, իսկ ենթահողում՝ հաճախ մինչև 30-40 %): Կիսանապատային գորշ հողերի պրոֆիլի միջին մասերում ձևավորվում է կարբոնատային ցեմենտացած հորիզոն՝ 15-30 սմ հզորությամբ, որը խանգարում է մշակաբույսերի նորմալ զարգացմանը: Անստրուկտուր են, հումուսի պարունակությունը տատանվում է 1,5-2,0 %-ի սահմաններում: Ունեն թույլ և միջին հիմնային ռեակցիա (pH=7,5-8,5): Այս հողերը շարժուն ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ թույլ և միջակ, կալիումով՝ միջակ և լավ են ապահովված:

Մարզի գյուղնշանակության հողերը կազմում են 156,901,71հա:

Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ

գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ագատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագածի խոշոր ջրհան կայանները:

Նկար 11



Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:



Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերնութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան տեղեկագրի՝ հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են կատարվել նաև Արարատի մարզում: Ներկայացվում է աղտոտվածության տվյալները աղյուսակով և գրաֆիկական սխեմաներով:

Աղյուսակ 6

Մարզ/ Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
<i>Վերագանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ</i>							

Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-
--------	-----	-----------	---------	----------	-----------	---------	---



Պժտագատկեր 128. Որոշ մարզերի հողային ծածկությունում մետաղների պարունակությունը, 2022թ.

8.2.5 Ջրային ռեսուրսներ

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքս գետի ավազանին: Մարզի ջրային ռեսուրսները ձևավորվում են 4 գետերով, տարածքով են հոսում՝ Արաքս, Հրազդան, Ագատ, Վեդի խոշոր գետերը, համեմատաբար փոքր գետերից՝ Արածոն, Չորասու հեղեղատարը, Ագատի ու Վեդի գետերի վտակները՝ Քաջառուն, Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ռոտզիչ նշանակություն: Ագատ գետի վրա Լանջազատ գյուղի մոտ կառուցված է Ջովաշենի ջրամբարը/70մլն մ³/ և համանուն ՀԷԿ-ը, Արածո գետի վրա՝ Չանգակատան ջրամբարը/15մլնմ³/: Մարզում 19-20-րդ դարերում կառուցվել են Կախանովի և Արատաշատի ջրանցքները: Արարատյան հարթավայրով անցնող գետերն ունեն ռոտզման նշանակություն:

Արարատի մարզի Մասիս համայնքի տարածքով են անցնում Հրազդան գետը, հարակից՝ Այր լճից սկիզբ առնող Սև ջուր գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը, որը հորդանում է գարնանը, երբեմն դուրս գալով ավերից: Համայնքից հարավ գտնվում են արհեստական լճակներ: Մարզն ունի բնառեսուրսային՝ հողային ջրային ներուժ՝ կապված արտեզյան ջրհորների առկայության և Հրազդան գետի հետ:

Վեդի գետի երկարությունը կազմում է 58կմ, ջրհավաք տարածքը՝ 998 կմ², հոսքը՝ 64 մլն մ³: Ագատ գետի երկարությունը 56 կմ է, ջրհավաք տարածքը՝ 952 կմ², հոսքը՝ 217 մլն մ³: Կան բազմաթիվ դրենաժային ցանցեր և խորքային հորեր:


Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի ջրերն օգտագործվում են ռոտզման նպատակով, սնումը ձնհալքային է, անձրևաջրերից գետերը գարնանը վարարում են: Ամռանը որոշ գետեր ցամաքում են:

Մարզում առկա են հանքային ջրեր՝ Արարատ և Վեդի բնակավայրերում:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն, համապատասխան դիտացանցերի միջոցով:



Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում. այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Մակերևութային ջրերի որակը ներկայացվում է համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի:



2023թ. Ագատի ջրամբարի ջրի որակը գնահատվել է «լավ» (2րդ դաս): 2024 թվականի 1-ին եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 3 Որոշված դիտակետում: ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, մանգանի, նիկելի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿները:

Նախատեսվող գործունեության տարածքում ջրային ռեսուրսներ չկան:

8.2.6. Կենսաբազմազություն.


Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային, անապատային և լեռնահարթավայրային է: Մարզում անտառածածկ տարածքներ գրեթե չկան, անտառապատ տարածքները կազմում են տարածքի 0,1%-ը: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը, գյուղատնտեսական նշանակության մշակաբույսերը: Խոնավ վայրերում աճում են եղեգներ: Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի «Հայաստանի հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրության՝

Հայաստանի ֆլորան այժմ ներկայացված է շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսերով՝ 160 ընտանիքից և 913 ցեղից:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արարատի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված են 137 բուսատեսակ, կենդանատեսակներից՝ 51 անողնաշարավոր կենդանիներ, 92 ողնաշարավոր տեսակներ:

Համաձայն Արարատի մարզի 2017-25թթ. զարգացման ծրագրի՝ Հայաստանի բուսատեսակներից կեսն աճում է Արարատյան դաշտավայրում և մոտակա լեռնաշղթաներում: Մարզում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված և էնդեմիկ տեսակներից աճում են ծիածանաթաղանթը, թրաշուշանը, վարդակակաչը և այլն: Կենդանատեսակներից՝ վարազը, արքայական եղջերուն, վայրի խոզը, լեռնային այծը և այլն: Արարատյան հարթավայրի ջրաճահճային հանդակները բնադրավայր ու ապրելավայր են հանդիսանում թռչունների ավելի քան 200 տեսակի համար: Արարատյան դաշտում ձկնային տնտեսությունների կողմից ստորգետնյա ջրերի ոչ արդյունավետ օգտագործումը հանգեցրել է բազմաթիվ աղբյուրների և ջրաճահճային տարածքների չորացման, որոնք կենսամիջավայր էին հանդիսանում կենդանական և բուսական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների համար:

Նկար 14



Բուսական աշխարհ. մարզի տարածքում գերակշռում են կիսաանապատային և անապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ սոլեբոն (Salicornia europaea), կալիդիում (Kalidium caspicum), աղահասկ (Halostachys caspica), բորակաբույս (Nitraria schoberi): Գիպսոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպսոֆիլ անապատներին բնորոշ բույսեր են՝ սապնարմատ (Gypsophila) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (Halanthium rarifolium), մոլոկան Թախթաջյանի (Lactuca takhtadzhianii), զուգատերև (Zygophyllum atriplicoides) և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղածնկիկ մատիտեղանման (Calligonum polygonoides), հազարատերևուկ նեղատերև (Achillea tenuifolia), եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (Ceratocarpus arenarius), զեյդլիցիա ծաղկավոր (Seidlitzia florida): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակներից են՝ Խնկեղեգ ճահճային (Acorus calamus L.), հացհամեմ գլխիկավոր (Trigonella capitata Boiss.), Հիրիկ մուսուլմանական (Iris musulmanica Fomin), Բինեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera Bunge), Միկրոկնեմում մարգանանման (Microcnemum coralloides), Կոմուլա Օշեի (Inula aucheriana DC) և այլն:

Նկար 15.



Չիրիկ մուսուլմանական - *Iris musulmanica Fomin*



Կոմուլա Օշեի - *Inula aucheriana DC.*

Մասիսի տարածաշրջանին բնորոշ են օշինդրը, անթառամը, օշանը, հավամրգին:

Կենդանական աշխարհ. կենդանական աշխարհին բնորոշ են կիսաանապատային ցամաքային էկոհամակարգին բնորոշ կենդանատեսակները: Տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ: Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են՝ գորշուկը, նապաստակը, ճահճակուղբը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակզաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևաորդը, մրջյունը, ծղրիդը, ճռիկը, մորեխը և այլն: Սողուններից հանդիպում են գյուրգա, հայկական իժ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (Eryx jaculus) և այլն: Թռչուններից հանդիպում են տնային ճնճուկը մոխրագույն ագռավը

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճուկը (Passer domesticus), մոխրագույն ագռավը (Corvus corone), անտառային արտույտը (Lullula arborea), գյուղական ծիծեռնակը (Hirundo rustica), եղինջաթռչնակը (Troglodytes troglodytes), ժայռային ծիծեռնակը (Ptyonoprogne rupestris): Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են բրամը (Abramis brama), ծածանը (Cyprinus carpio), սովորական լոքոն (Silurus

glani) և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանատեսակներից և թռչնատեսակներից են՝ Մեծաչք ճպուռ (*Lestes macrostigma*), Սևծովյան ճպուռ (*Libellula pontica* Selys), Վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus* Linnaeus), Փոքր ձկնկուլ (*Phalacrocorax pygmaeus* Pallas), Ճչան կարապ (*Cygnus cygnus*), (Գիշանգղ *Neophron percnopterus* Linnaeus), Օձակեր արծիվ (*Circaetus gallicus*), Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*), Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis orientalis* Hodgson), Կրկնակցար (*Gallinago medi*), Ներկարար (*Coracias garrulus*), Սպիտակափող սիխակ (*Irania gutturalis*), Կոցար կաճաղակ (*Haematopus ostralegus* Linnaeus), Փոքր ձկնկուլ - (*Phalacrocorax pygmaeus* Pallas) այլն:

Նկար 16.



Փոքր ձկնկուլ - *Phalacrocorax pygmaeus* Pallas



Ներկարար - *Coracias garrulus*

Կենդանատեսակային կազմից կարևորվում է նաև աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphiophora hamelii*) գոյությունը, որը զարգանում է որդանախտի (*Aeluropus littoralis*) արմատների վրա:



Նկար 17. Արարատյան որդան (*Porphiophora hamelii*)

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ,

ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

8.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով և տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր:

Համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի հանրապետության Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձանների» N 385-Ն որոշման հավելված 4-ի՝ Արարատի քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված է 3 հուշարձան):

2.2 ԱՐԱՐԱՏ քաղաք

Աղյուսակ 7

1	2	3	4	5	6	7	8
1			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից 1 կմ հս, բլրաշղթայի վրա	<	1
2			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ	1992 թ.	քաղաքի մեջ	S	2
3			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1985 թ.	քաղաքի մեջ	S	3

2.47 ԼԱՆՁԱՌ գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հվ-ամ, Երևան-Ջանգակատուն ավտոմայրուղուց ձախ	<	1
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցից ամ	<	պահպանվել է հատվածաբար (1.1)
2			ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	գյուղից 2 կմ ամ, «Կապույտ խաչ» վայրի նորաշեն սրբատեղիում	<	3
3			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.	գյուղի սկզբնամասում, ճանապարհից ձախ	S	4

4		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.	գյուղի ամ մասում	S	5
---	--	--	---------	------------------	---	---

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Արարատի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները:

Աղյուսակ 8.

	Երկրաբանական	
1	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3	« Մեծ հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17- րդ կմ-ի վրա
5	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6	. «Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
	Կենսաբանական հուշարձան	
1	«Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային և բնության հուշարձանները բացակայում են: Ենթակա տարածքը մոտակա «Անանուն ծալքավոր ստրուկտուրա» բնության հուշարձանից գտնվում է 1,5կմ, «Անանուն անտիկլինա ծալք» բնության հուշարձանից՝ 1,4կմ հեռավորություններ վրա:

8.8 Հատուկ պահպանվող տարածքներ

Արարատի մարզում են գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ», «Խորվիրապ», «Գիլան» արգելավայրերը և 11 բնության հուշարձան:

Խոսրովի արգելոցը կազմավորվել է 1958 թ. Հարավային Հայաստանի բնական համալիրների պահպանման համար: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաձյուղի Գառնիի և Վեդի գետերի ավազանում: Մակերեսը 23213,5 հա է համաձայն՝ Կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի N 500-Ն որոշման, որից անտառայինը՝ 9446 հա: Ռելիեֆը լեռնային է (բարձրությունը ծովի մակերևույթից 16003400 մ է) կտրտված է բազմաթիվ կիրճերով: Արգելոցի սահմաններում աճում են բարձրակարգ բույսերի 1849 տեսակ (Հայաստանի բուսականության տեսակային կազմի 60%-ը, որոնցից 146-ը գրանցված են «Կարմիր գրքում»: Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ (24), օրինակ՝ հայկական ալոճենին, Վավիլովյան աշոբան (տարեկան) և այլն: Արգելոցի տարածքում հանդիպում են 1500 անողնաշարավոր և 283 ողնաշարավոր կենդանիներ, որոնցից համապատասխանաբար 31-ը և 34-ը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: 50-ը գրանցված են «կարմիր գրքում»: Թռչնաֆաունան մոտ 130 տեսակ է. դրանց թվում են՝ քարակազավը, սև անգղը, գառնանգղը, կարմրաթև մագլցողը և այլն: Կաթնասուններից կա 55 տեսակ, սողուններից՝ 30, երկկենցաղների 4 և ձկների 9 տեսակ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-338թթ-ին: Խոսրովի արգելոցի տարացքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ:

«Գոռավանի ավազուտներ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, զբաղեցնում է Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթությունները, Վեդի քաղաքի հարավային մասը՝ Գոռավան գյուղի մոտ, Վեդի գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները, ծովի մակերևույթից 1100-1200 մետր բարձրության վրա. «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտներն ավազային անապատին յուրահատուկ կենդանական աշխարհն ու ավազասեր բուսականությունն են:

«Խոր Վիրապ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Արարատի հարթավայրում. Խոր վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, Արտաշատ հնագույն քաղաքի մոտ, ծովի մակերևույթից 815.8-887 մետր բարձրության վրա: «Խոր Վիրապ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

«Գիլան» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Գեղամա լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակերևույթից 1330-1400 մետր բարձրության վրա:

Մարզում հատուկ պահպանվող տարածքները կազմում է ընդհանուր հողատարածքի 13,8%-ը:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

8.2.10 Սոցիալ-տնտեսական.

Արարատի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավ-արևմուտքում: Մարզը հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին և Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերին, հարավից՝ Ադրբեջանին, իսկ հարավարևմուտքից, պետական սահմանով՝ Թուրքիային: Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: Մարզի ամենախոշոր քաղաքը Արտաշատն է, որը գտնվում է Երևան-Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու վրա Երևան քաղաքից 10կմ հեռավորության վրա:

Տարածքը Territory	2 090 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	7.0
Համայնքներ, 2023թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2023	5
Քաղաքներ Towns	4
Գյուղեր Villages	95
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	259.3 հազ. մարդ/ ths. person
<i>այդ թվում՝</i> <i>including:</i>	
Քաղաքային Urban	72.3 հազ. մարդ/ ths. person
Գյուղական rural	187.0 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2022, %	8.7
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ., % Share of urban population size 2022, %	27.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	156 020.4 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	24 130.8 հա/ ha

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ: Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Մարզի բազմաձյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Մարզում առավել հայտնի է որպես ծանր արդյունաբերություն՝ ցեմենտի գործարանը և ոսկու կորզման ֆաբրիկան, առկա են 103 արտադրական ձեռնարկություններ, շինարարական կազմակերպություններ, 112 հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի և

գեղարվեստի դպրոցներ, մշակույթի տներ, 1 պետական դրամատիկական թատրոն, 2 տուն-թանգարան, 4 բժշկական կենտրոններ, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, բուժամբուլատորիաներ: Առաջատար տեղ է զբաղեցնում ձկնարդյունաբերությունը, առկա է 157 ձկնաբուծական տնտեսություն: Հարուստ է օգտակար հանածոներով՝ տրավերտինի, կավերի, կրաքարի, ավազի, ավազակոպճային խառնուրդի, օնիքսանման մարմարների, մարմարացված կրաքարերի, բազալտի, միկրոբրեկչիանների հանքավայրերով: Մետաղական հանածոների արդյունաբերական պաշարներ մարզում առկա չեն: Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Արտաշատը զարգացած է գինու, մրգի պահածոների, հախճապակու, խեցեգործական իրերի արտադրության ուղղությամբ: Մասիսին և Վեդուն բնորոշ են սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը: Մասիսը նաև խոշոր երկաթուղային ապրանքային կայարան է, որն ունի միջմարզային նշանակություն:

Մարզի տնտեսության զարգացման համար իրենց դերն ունեն նաև զբոսաշրջային ռեսուրսները: Ունի հարուստ բնաաշխարհ՝ Արարատ, Գեղամա լեռներ, Խոսրովի անտառ: Մարզն հարուստ է տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր: Տարեկան հազարավոր զբոսաշրջիկներ այցելում են Խոր Վիրապի վանքային համալիր, Պարույր Սևակի տուն-թանգարան և այլ վայրեր: Էկոզբոսաշրջության զարգացման համար բավարար նախադրյալներ կան Խոսրովի արգելոցում և Դաշտաքարում:

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2022թ.-ին Արարատի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

➤ արդյունաբերություն	11.2 %,
➤ գյուղատնտեսություն	14.7 %,
➤ շինարարություն	5.8 %,
➤ մանրածախ առևտուր	3.8 %,
➤ ծառայություններ	1.6 %:

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով:

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ ՀՀ Արարատի մարզի տարածքը կազմում է 2090քկմ: Բնակչությունը 2023թ. կազմում է 259,3 հազ. մարդ: Բնակչությունը հիմնականում միատարր է, ապրում են նաև ռուսներ, քրդեր, ասորիներ: Բնակելի տարածքները հիմնականում տեղակայված են հարթավայրային գոտում:

Արարատ համայնքի մեջ են մտնում 12 բնակավայրեր՝ ք. Արարատ, Ավշար, Արմաշ, Երասիս, Զանգակատուն, Լանջառ, Նոյակերտ, Ուրցալանջ, Պարույր Սևակ, Սուրենավան Վարդաշատ, Տիգրանաշեն բնակավայրերը:

Արարատ քաղաքը գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.-ին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը): Համայնքի ենթակառուցվածքները, մասնավորապես կեղտաջրերի հեռացումը գտնվում է ոչ բավարարա վիճակում:

2023թ. տարեկազմի քաղաքի բնակչությունը կազմում է 20.5 հազ. մարդ: Բնակչությունը հիմնականում միատարր է:

Գ. Լանջառ- Գյուղը հիմնադրվել է 1873 թվականին (նախկին անվանումը՝ Բիրալու): Վերանվանվել է Լանջառ 1968 թ.-ին: Գտնվում է մարզկենտրոնից 55 կմ հարավ-արևելք: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1800մ: Տեղադրված է Արարատյան դաշտից հարավ-արևելք Ուրծի լեռնաշղթայի լանջերին: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռը տևական է, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -8-ից -12աստիճան, հուլիսյան միջինը՝ +18-ից +22 աստճան: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններն են: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է մասնակի ռոռզման գոտում:

Բնակչությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 209 մարդ: Գյուղում առկա են արոտավայրեր և խոտհարքեր: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, ունի պտղատու այգիներ: Մշակում են հացահատիկային և կերային կուլտուրաներ, զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի: Բնակիչները բոլորը հայեր են, ազգային փոքրամասնություններ չկան: Ունի մեկ հիմնական դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղից 1 կմ հարավ-արևմուտք գտնվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակներին վերագրվող ամրոց:

Որոշ գյուղերում, այդ թվում՝ Լանջառում խմելու ջուրը մատակարարվում է առանց մաքրման: Բնակավայրի հիմնախնդիրներից է կոյուղու ցանցի, գազամատակարարման համակարգի բացակայությունը, ռոռզման ներտնտեսային ցանցերի անբավարար վիճակը, գյուղտեխնիկայով ապահովվածության ցածր, բնակչության մեջ գործազրկության, աղքատների բարձր մակարդակը և այլն:

**9. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝
նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական)
տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված
տարբերակի հիմնավորումը:**

ՇՄԱԳ-ի շրջանականերում դիտարկվել է նախատեսվող գործունեության զրոյական, այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

Զրոյական տարբերակ նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում, որը կհանգեցնի առաջին 20 տարվա ընթացքում այլ աղբյուրներից մոտ 139,500,000 ԿՎտ. էլեկտրաէներգիայի չարտադրելուն: Նշված քանակի էլեկտրաէներգիայի պահանջարկը հնարավոր կլինի ապահովել շրջակա միջավայրի վրա առավել ազդեցություն ունեցող էներգիա արտադրող այլ գործունեությունների շնորհիվ՝ ջերմաէլեկտրակայան, հիդրոէլեկտրակայան և այլն, ինչն իր հերթին կհանգեցնի շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունների աճին:

Արևային էլեկտրակայանի միջոցով էլեկտրաէներգիայի ստացումը նպաստելու է օդում ածխաջրածինների կրճատմանը, որոնք արտանետվում են էներգիայի ստացման այլ աղբյուրներից: Ածխաջրածինները նպաստում են կլիմայի փոփոխությանը՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:

Արևային էլեկտրակայանների ներդրումը էներգետիկ համակարգում համարվում է

ամենահեռանկարային այլընտրանքային ճյուղը: Համաձայն միջազգային էներգետիկ գործակալության տեսության 40 տարի հետո արևային էներգետիկան կարտադրի ամբողջ համաշխարհային էներգետիկ պահանջարկի շուրջ 20-25%-ը, ինչն իր հերթին կնպաստի տարեկան 6 միլիարդ տոննա ածխաջրածնային գազերի կրճատման:

Տարածքի այլընտրանք: Տարածքն ընտրված է ելնելով արևային էներգետիկայի զարգացման համար նպաստավոր պայմաններից: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում արևային էներգետիկայի զարգացման համար: Տարածքը գերարածեցված է, գտնվում մարդու ակտիվ գործունեության գոտում: Հողի նպատակային նշանակությունը՝ էներգետիկ ենթակառուցվածքների է:

Ընտրված տարբերակի հիմնավորումը: Նորագույն տեխնոլոգիաների սրընթաց աճի հետ զուգահեռ կարևոր է շրջակա միջավայրի պահպանման գիտակցումը, և այնպիսի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, որոնք անվտանգ են շրջակա միջավայրի համար: Արևակայանի կառուցման դեպքում.

- ՀՀ-ում հանրության համար այլընտրանքային էներգիան դառնալու է հասանելի,
- կապահովի բնակչության էներգասպառման հեռանկարային պահանջարկը,
- կհանգեցնի բնակչության կոմունալ բեռի թեթևացմանը, ֆինանսական միջոցների խնայմանը և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Վերականգնվող էներգետիկ համակարգերը, որոնց թվին են պատկանում արևային էլեկտրակայանները, գործնականում արդեն լայն կիրառում ունեն աշխարհում:

Աշխարհը հիմնված է էներգետիկ պաշարների օգտագործման վրա, որոնք հետզհետե սպառվում են և չեն վերականգնվում: Էներգիայի ստացման այլ մեթոդները վնասում են բնությանը և մարդկանց առողջությանը, միաժամանակ սպառնում երկրի բնական պաշարների նավազեցմանն ու անհետացմանը: Ներկայումս էլեկտրաէներգիայի 70%-ն աշխարհում արտադրվում է հանածո վառելիքների հիման վրա (նավթ, ածուխ, բնական գազ): Ջերմային էներգիայի արտադրությունում հանածո վառելիքների մասնաբաժինը 90% է:

Համաձայն էներգետիկայի հայկական գործակալության կայք էջի՝ Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ (1մ^2 հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կվտժ/մ², իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կվտժ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով): Այն հնարավորություն է տալիս Հայաստանի հանրապետությանը զարգացնել իր տնտեսությունը, նվազեցնելով կախվածությունը ներմուծվող վառելիքից:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև կրճատում է էներգիայի ստացման ծախսերը: Էներգախնայողությունն էապես կարող է նպաստել և՛ շրջակա միջավայրի, և ամբողջ մոլորակի բնապահպանական խնդիրների լուծմանը: Ներկայիս տեխնոլոգիաները, որոշակի ներդրում կատարելուց հետո, թույլ են տալիս նույնիսկ տնային տնտեսություններում ունենալ սեփական, բնական էներգիայի ստացման աղբյուրներ: Էներգիայի և ռեսուրսների անխնա սպառման հետևանքները գալիք սերունդների համար կարող են ունենալ լուրջ բացասական ազդեցություն, ուստի այլընտրանքային, վերականգնվող այդ թվում արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար:

Գործունեության առաջին 20 տարվա ընթացքում կարտադրվի $139.500.000$ կվտ, ինչը կլրացնի հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը, օգուտների և վնասների

համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ արևային էլեկտրակայանների օգուտները շատ ավելին են, քան պատճառվող վնասները:

Ընտրված տարածքը ևս բավականին նպաստավոր է արևային էներգետիկայի զարգացման համար, շրջակա միջավայրի վրա հնարավոր ցածր և աննշան ազդեցություններով:

10. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման փուլեր), փակման և հետփակման փուլեր.

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ՀՀ Արարատի մարզի, Արարատ համայնքի լանջառ բնակավայրի Ջորավար Անդրանիկի փ. 1/1 հասցեում՝ 7.00001 հողատարածքի վրա: Համաձայն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տարածքում կառուցել 6300կՎԱ հզորության 35/08կՎ լարման ենթակայան: Ենթակայանի միացումն իրականացվելու «Լանջառ» 35 կՎ օդային գծի թիվ 77-78 միջանկյալ հենարանների հենամիջում նոր տեղադրված խարսխային հենարանին, կառուցելով մոտ 300մ 35կՎ էլեկտրահաղորդման գիծ: Արևակայանի, ենթակայանի, մալուխագծերի, ՕԳ-ի նախագծերը կատարված են հիմք ընդունելով «Շինարարական Նորմեր և Կանոններ»-ի պահանջները (ՇՈՒՍ) 3.05.06-85, գործող «Էլեկտրատեղակայանքներ. Սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի 6-րդ և 7-րդ բաժինների՝ ներառյալ փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև ՀՀ ստանդարտ ՀՍՏ 335-2011 «Արևային Լուսաէլեկտրական Կայանքների (մինչև 5ՄՎտ) Միացումը Էլեկտրաէներգետիկական Համակարգի Ընդհանուր Նշանակության Էլեկտրական Ցանցին» դրույթները:

10.1 Շահագործման փուլ.

Արևային կայան: Նախատեսվում է 5,065ԿՎտ պիկային առավելագույն հզորության (հաստատուն հոսանքի) արևային ֆոտովոլտային էլեկտրակայան, իսկ փոփոխական հոսանքի մասը համաձայն՝ Հանրային հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայով սահմանվել է 4,5ՄՎտ: Տեղադրվելու են ֆոտովոլտային վահանակներ, որոնց զբաղեցրած մակերեսը կազմելու է 5 հա: Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 8372 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 605Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 10 հատ 350կՎտ և 4 հատ 250կՎտ էլքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի էլուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Ընտրվել են JAM66D45-605/LB ֆիրմային արտադրության 22.4% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 605Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ: Մեկ մոդուլի չափսեր են՝ 2382x1134x30մմ: Փոխակերպիչները Ginlong (Solis) արտադրության են, մոդելը SOLIS-250-EHV-5G 250կՎտ էլքային հզորության և SOLIS-350-EHV-M12 350կՎտ էլքային հզորության՝

ցանցային տեսակի, 12 MPPT (Maximal Power Point Tracker) 24 մուտքերով: Արևային էլեկտրակայանի մոդուլները տեղադրվելու են բետոնե հիմքերով մետաղական կոնստրուկցիաներով՝ ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է: Փոխակերպիչի հաստատուն հոսանքի " + " և " - " շղթաների մուտքերը պաշտպանված են 15Ա ապահովիչներով: Փոխակերպիչն ունի համացանցին միանալու և տվյալները փոխանցելու հնարավորություն, նրանում ներկառուցված են DC և AC ինպուլսային գերլարրումների պաշտպանիչ սարքեր (SPD):

Արևակայանի Ֆոտովոլտային վահանակների միացումը. Ֆոտովոլտային պանելների շղթաները միմյանց միացվում են պանելների մուտքին 4մմ² (EU)/12AWG(US), L=1200մմ և PV1-F1x4մմ² մալուխներով: Մոդուլների և փոխակերպիչների համար նախատեսված են MC4 տիպի կոնեկտորներ: Շղթաների զուգահեռ միացումներն ապահովված է փոխակերպիչներում, յուրաքանչյուր 25 և 18 շղթայի համար նախատեսված է առանձին փոխակերպիչ: Տարածքում տեղակայվող ավտոմատ անջատիչները IP 65 տիպի են, իսկ փակ տարածքում՝ IP 31 տիպի:

Արևակայանի յուրաքանչյուր փոխակերպիչից դեպի ՏԵ ցածր լարման վահաններ էլեկտրամատակարարումը իրականացվում է այլումենե հաղորդաջղերով պոլիվիլիքլորիդե մեկուսացմամբ, հարթ ժապավենով մետաղե զրահով, որի բարձիկներում պաշտպանիչ շերտի բացակայում է, արտաքին ծածկույթը պոլիվիլիքլորիդ նյութից АВЕ6IIIВ տիպի 3x120մմ² , 3x185մմ² հատույթի մալուխազծերով: Մալուխները խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե անկողին, այնուհետև տեղադրվում են մալուխները և ծածկվում 150մմ ավազե շերտով, որից հետո խրամուղին լցվում է ավազակոպչային խառնուրդով, այնքան որ հնարավոր լինի մալուխից 250մմ բարձրության վրա տեղադրել ազդանշանային ժապավեն, ապա խրամուղին լցվում է ավազակոպիչով: Մալուխները խրամուղում տեղադրվում են գետնից 0.7մ խորության վրա: Մալուխները տեղադրվում են օձաձև, ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար: Մալուխները կարճ միացման և գերբեռնվածության հոսանքներից պաշտպանվում են մուտքային եռաֆազ 250 Ա և 315 Ա ավտոմատ անջատիչներով:

Տրանսֆորմատորային ենթակայան: Ենթակայանի կառուցման համար նախատեսվում է տեղադրել 6300կՎԱ հզորության 35/08կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ: Ենթակայանի զբաղեցրած մակերեսը կազմում է 72մ² : Օգտագործվում է նաև 25կՎԱ 35/0.4կՎ տրանսֆորմատոր՝ սեփական կարիքների համար: Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ:

Սեփական կարիքներ. Արևային ֆոտովոլտային կայանը 35կՎ ցանցին միանում է 6300ԿՎԱ 35/0.8կՎ տրանսֆորմատորի միջոցով, օգտագործվում է նաև 25կՎԱ 35/0.4կՎ տրանսֆորմատոր՝ սեփական կարիքների համար: Սեփական կարիքների տրանսֆորմատորը տեղադրվելու է նոր կառուցվող ենթակայանի մեջ՝ կոնտեյնների կողքը և

սնուցելու է պահակատանը, տարածքի լուսավորությանը և տեսախցիկներին:

Էլեկտրական էներգիայի հաշվառքը. Հաշվառքի հանգույցը կազմակերպվում է 35 կՎ «Լանջար» ՕԳ-ից ճյուղավորման սկզբում: Ճյուղավորման հանգույցը նախատեսված է 35 կՎ հաշվառքի հանգույցի լրակազմում: Այն ծառայելու է արևակայանի կոմերցիոն հաշվառքի համար: Հաշվառքի հանգույցը բաղկացած է անհրաժեշտ 35 կՎ սարքավորումներով և հավաքված է ԵՅ(Ա) 6-Y1 բլոկի վրա: Այն զբաղեցնում է 9x9 չափսերով տարածք՝ ցանկապատված 2,5մ բարձրության ցանկապատով:

Շանթապաշտպանություն. -իրականացվում է ՍԸ-35Յ3 պորտալի վրա տեղադրված շանթարգելով: Պորտալի վրա ամրացված մեկուսիչների շարանը բաղկացած է 6 հատ ՍԸ - 70E մեկուսիչներով: Աշխատանքները կատարվելու են համաձայն՝ ՇՊ76.13330.2016 «ՇՏԻՍ 3.05.06-85 պահանջներին համապատասխան:

Հողանցում. հողանցման սարքը բաղկացած է 18 հատ 2,5մ էլեկտրոդներից՝ պատրաստված 50 x50 x5մմ անկյունային ցինկապատ պողպատից, որոնք միմյանցից անջատվելու են 40 x 4մմ ցինկապատ շերտապողպատով: Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չպետք է գերազանցի 4Օհմ: Աշխատանքները կատարվելու են համաձայն՝ ՇՊ76.13330.2016 «ՇՏԻՍ 3.05.06-85 պահանջներին համապատասխան:

Մալուխագծի հողանցումը կատարվելու հողանցման սարքով: Հողանցման սարքը բաղկացած է 14 հատ 2.5 մ էլեկտրադներից պատրաստված 50x50x5 մմ անկյունային ցինկապատ պողպատից, որոնք միմյանց հետ միացվում են 40x4 մմ ցինկապատ շերտապողպատով: Բոլոր մետաղական ոչ հոսանքատար սարքավորումները պետք է հողանցվեն: Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չպետք է գերազանցի 4Օհմ: Ֆոտովոլտային պանելների այլումինե իրանը հողանցման հաղորդալարով միացվում է հողանցման համակարգին:

Օդային գիծ. նախատեսվում է կառուցել 35/0,8/0,8կՎԱ հզորությամբ տրանսֆորմատորային տնտեսություն , իսկ օդային գիծը միացվում է գործող «Լանջար» 35 կՎ ՕԳ-ի թիվ 78 և թիվ 79 հներաների միջնամասում՝ ճյուղավորումով: Ճյուղավորման հանգույցը նախատեսված է 35 կՎ հաշվառքի հանգույցի լրակազմում: Օդային գծի ընդհանուր երկարությունը կազմում է 321մ, որն անցնում է համայանքային հողերով: Նախագծում նախատեսված են 35 կՎ «Սևան» տիպի ազատ կանգնող մետաղական 97-167մ բարձրության 35կՎ հենարաններ՝ 3 հատ: 35կՎ օդային գիծը նախատեսված է AC-70/11 մակնիշի պողպատ-ալյումինե հաղորդալարով, որն ամբողջ երկարությամբ պաշտպանվում է շանթապաշտպանիչ ճոպանով: Օդային գծի հաղորդալարերի հեռավորությունը բնահողի մակերևույթից ապահովվելու կազմելու է ոչ պակաս 7 մետրից: 35 կՎ օդային գծի բոլոր հենարանները նախատեսվում է հողանցել թիվ 1 հենարանի հողանցման սարքվածքը միացնելով հաշվառքի հանգույցի հողանցման սարքին: Արևային էլեկտրակայանի տարածքում տեղակայվող 35/0,8/0,8 կՎ 1x6300 կՎԱ ԼՏԵ-ն միացվում է 35 կՎ ՕԳ-ի թիվ 3 հենարանից 35 կՎ մալուխի միջոցով:

Մալուխագիծ- 35 կՎ օդային գիծը մալուխային գծի անցման համար նախատեսված է թիվ 10 ՕԳ-ի հենարանի վրա տեղադրել անջատիչ, 35 կՎ հենարանային մեկուսիչներ և լարման սահմանափակիչներ: Մալուխի ամրացումը հենարանի մետաղական կոնստրուկցիաներին իրականացվում է KOZ - ST սեղմակներով: Գետնից մինչև 2մ բարձրության մալուխը

անցկացվում է խողովակով մեխանիկական վնասներից պաշտպանելու համար: Մալուխի էկրանները մի ծայրից միացվում է հենարանի հողակցման սարքին (ՀՍ), իսկ մյուս ծայրից LՏԵ-ի հողակցման սարքին: Մալուխագծի երկարությունը կազմում է մոտ 67 մետր, որն անցնում է միայն արևակայանի տարածքով: Մալուխը խրամուղում անցկացվում է 1 մ խորության վրա, իսկ ճանապարհի հետ հատման տեղում անցկացվում է $Dy=100$ մ տրամագծով խողովակի միջով: Հաղորդալարերը լինելու են պողպատ-ալյումինե:

Արտաքին լուսավորություն և տեսահսկում. տարածքի լուսավորությունը կատարվում է հարտակի անկյուններում տեղադրված 100 Վտ լուսարձակների միջոցով, որոնք պետք է միացվեն 220 Վ ցանցին: Այս խմբի վրա պետք է տեղադրվի 30 մԱ դիֆերենցիալ հոսանքով պաշտպանիչ անջատման սարք (ՄՅՕ): Ունենալու է լուսավորության ավտոմատ կառավարման արկղ:

Արտակարգ իրավիճակներ և տեսահսկման համակարգ. Նախատեսված է նաև տարածքի տեսահսկում արտաքին տեղադրման տեսախցիկներով, որոնք տեղադրվում են լուսավորության հենասյուների վրա: Տեսահսկման համակարգն ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում:

Նախատեսվում է տեղադրել նաև հրդեհաշիջման վահանակ, հակահրդեհային կրակմարիչեր:

Օպերատորական և պահեստային շինություն: Տարածքում տեղադրվելու է 5*5մետր չափերի մետաղական շինություն՝ խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած վահանակների ժամանակավոր պահման համար, որը ներառում է նաև օպերատորական հատվածը: Մոնիթորինգի նպատակով տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

Ցանկապատում. Արևակայանի տարածքը ցանկապատվելու է 2մ բարձրությամբ մետաղացանցով: Իսկ ենթակայանի տարածքը՝ 2,3մ բարձրության, 9*9մ երկարության և լայնությամբ ցանկապատով:

10.2 Շինարարության փուլ.

Գործունեության տարածքում բացակայում են շենք-շինություններն, ուստի քանդման աշխատանքներ չեն նախատեսվում: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

Շինհրապարակ. գործունեության իրականացման համար կազմակերպվելու շինհրապարակ, ընդհանուր՝ 7200մ² մակերեսով:

Շինարարության փուլում նախատեսվում է հետևյալ շինարարական աշխատանքները.

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- հողային աշխատանքներ,
- շինտեխնիկայի կայանման վայր,
- ծածկեր, կոնստրուկցիաներ,
- հարդարման, բարեկարգման աշխատանքների իրականացում և այլն:

Շինարարական հրապարակում լինելու են.


- աշխղեկի գրասենյակ - 1 հատ
- աշխատակազմի սենյակ/հանդերձարան/-1 հատ
- նյութերի պահեստավորման, հողի պահման վայրեր
- բիոզուգարան - 2 հատ








- պահակատուն-1 հատ
- աղբի կետ- 2հատ
- լուսարձակներ -2հատ
- հակահրդեհային վահանակ, հիդրատներ
- մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ 8,0x3,5 մ չափերի:

Շինհրապարակներն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լուքսից ոչ պակաս:

Շինհրապարակներում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք:

Շինհրապարակների կազմակերպման հատակագիծը



-  Լուսավորության հենարան (2-հատ) ճանապարհ
-  Բիզնեսի գրասենյակ (2-հատ)
-  Դահլիճառան ճանապարհ (1-հատ)
-  Աշխատակազմի սենյակ (1-հատ)
-  Սրահայրարան կենտրոն (2-հատ)
-  Ավտովազում (1-հատ)
-  Երկրի պահեստավորման տարածք (1-հատ)

				Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի աշխատանքային նախագիծ		
				Հատակագիծ		
				Փուլ	Ձև	Ձև
Լճ	Անուն	Արդյունք	Ձև	01	02	02
Լճ	Կ. ՆՆՐԱԿՅԱՆ					
Լճ	Կ. ՏՕՍԱԳՅԱՆ					
				Իրավիճակային հատակագիծ		



Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վազոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման հարթակ՝ յուրաքանչյուրը 8,0x3,5 մ չափերի: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման կազմակերպված դրենաժային ցանցին, որն էլ կուղղորդվի բիոզուգարաններ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով՝ ծալքաթիթեղով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները, տեղադրվելու են վտանգն ազդարարող համապատասխան նշաններ, տեղեկատվական պաստառ՝ Կառուցապատողի վերաբերյալ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Լուսավորություն և ջեռուցում. շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ), որի լուսավորությունը կկատարվի 25ԿՎԱ հզորության ժամանակավոր անցկացվող էլեկտրական հոսանքի միջոցով՝ «ՀԷՑ» -ի թույլտվության հիման վրա/կտրամադրվի շինթույլտվության փուլում/:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.

Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Օգտագործվելու են, մասնավորապես.

- հորատող
- Հարթեցնող
- Ինքնաթափ
- Ավտոմոբիլային մոնիպուլյատոր
- Կցորդային բեռնատար
- Ավտոմոբիլային ամբարձիչ
- Ավտոինքնաթափ
- Խորքային թրթռիչ
- Աշտարակային կռունկ՝ 25տ տարողության
- Էքսկավատոր-1 հատ
- Բետոնախառնիչ և այլն:

Հողային ռեսուրսներ. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ: Արևակայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի, հաշվառքի սարքի տեղակայման, ենթակայան տանող

ստորգետնյա մալուխագծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ: Հանվելու է VI-րդ կարգի հողային գրունտ. Ընդհանուր հանվելու է 1,462.4մ³ ծավալի հողային ածխատանքներ, որից 1307մ³-ը օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման նպատակով, իսկ մնացած 155,4մ³-ը տեղափոխվելու է մոտ 7կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ համայնքի համաձայնությամբ: Տարածքում առկա է հողաբուսաշերտ՝ 56,4մ³ ծավալի: Այն օգտագործվելու է տարածքի բարեկարգման նպատակով:

Հողային աշխատանքները կատարվելու են տեխնիկայով և ձեռքով:

Ջրային ռեսուրսներ. Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ շարժական 1,0*1,5 չափերի 2 հատ բիոզուգարան՝ լվացարանով:

Թափոններ. Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինարարական աղբի տեսքով՝ նյութերի մնացորդներ (ավազ, մանրախիճ, պլաստմասե իրեր և այլն), աղտոտված լաթեր, պարկեր, կենցաղային աղբ, մետաղական մնացորդներ(մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն):

Մոցիալական. Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 31 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Բարեկարգում. Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

10.3 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.

Արևակայանի և ենթակայանի տեղակայման, մալուխագծի անցկացման աշխատանքները տևելու են 7 ամիս կամ 210 օր՝ ըստ ժամանակացույցի:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

1. Պլանավորում և կազմակերպում:

2. Տրանսֆորմատորի, էլեկտրական մալուխների, սարքավորումների մատակարարում:

3. Շինարարական աշխատանքներ, Շինհրապարակի կազմակերպում:

4. Հողային աշխատանքներ:

5. Մետաղական կոնստրուկցիաների հիմքերի տեղադրում, սարքավորումների մոնտաժում:

6.Խամուղիների նախապատրաստում և մալուխների անցկացում, հողանցման կոնտուրի իրականացում:

7.Ֆոտովոլտային վահանակների տեղադրում և այլն:

Սանեռքի Milestones

NN	Աշխատանքի անվանում	1-ին ամիս			2-րդ ամիս			3-րդ ամիս			4-րդ ամիս			5-րդ ամիս			6-րդ ամիս			7-րդ ամիս		
		1 - 10	10 - 20	20 - 30	1 - 10	10 - 20	20 - 31	1 - 10	10 - 20	20 - 30	1 - 10	10 - 20	20 - 31	1 - 10	10 - 20	20 - 30	1 - 10	10 - 20	20 - 31	1 - 10	10 - 20	20 - 31
	Ապրանքների և սարքավորումների մատակարարում																					
1	Վահանակների ներկրում																					
1.1	Վահանակների ներկրում																					
1.2	Ինվերտորների ներկրում																					
1.3	Էլեկտրական մալուխներ																					
1.4	Տրանսֆորմատոր և բաղկացուցիչ մասեր																					
1.5	Կրող կոնստրուկցիայի հումք և արտադրություն																					
1.6	Այլ սարքավորումների ներկրում և մատակարարում																					
2	Շինարարական աշխատանքներ																					
2.1	Նախնական ինժեներական աշխատանքներ (mobilisation)																					
2.2	Հողային աշխատանքներ																					
2.3	Կրող կոնստրուկցիաների բետոնե հիմքերի տեղակայում																					
2.4	Կրող կոնստրուկցիաների հավաքում																					
2.5	Տարածքի ցանկապատում																					
3	Սարքավորումների մոնտաժ																					
3.1	Մալուխների անցկացում																					
3.2	Հողանցման ցանցի մոնտաժ																					
3.3	Արևային վահանակների տեղադրում																					
3.4	Ինվերտորների տեղադրում և էլեկտրական միացում																					
3.5	Տեսահսկման համակարգի և լուսավորության մոնտաժում																					
4	Ենթակայանի և մալուխային գծի մոնտաժում																					
5	Ղեկավարման շենքի կառուցում և ներքին հարդարում																					
6	Տրանսֆորմատորի տեղակայում և էլեկտրական միացում																					
7	Կայանի մեխանիկական հանձնում																					
8	Աշխատակիցների համար դասընթաց																					
9	Թույլտվությունների ստացում																					
10	Առևտրային շահագործում																					

10.2 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Ջուր: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կնքվելու է Կապալառու կազմակերպության կողմից համապատասխան թույլտվություն /ՋԹ/ ունեցող կազմակերպության հետ՝ շինարարական աշխատանքների սկզբում:

Համաձայն համայնքի կողմից տրված նախագծման թույլտվության արևակայանի կառուցման աշխատանքները նախատեսվում են 24 ամիս, որը ներառում է նաև նախապատրաստական՝ փաստաթղթերի կազմակերպման, ստացման ժամանակամիջոցը: Իսկ շինարական աշխատանքները տևելու են 210 օր, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 31 աշխատակից:

Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է տարածքի հրդեհամարման, անիվների լվացման, տարածքի ջրման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{Է.ի.}} = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 6 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

$n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 25 մարդ

$N1$ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 210օր:

$W_{\text{խ.տ.}} = (6 \times 0.016 + 25 \times 0.025) \times 210 = 151,4 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,721 \text{մ}^3/\text{օր:}$

Անիվների լվացման համար Շինարարության փուլում նախատեսվում է, մեքենաների անիվների լվացումը նախատեսվում է 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ տեղադրվելու են 1 հատ լվացման կետեր, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$Q_2 = 0.8 \times 1 = 0.8 \text{լ/վրկ}$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

$S1$ – ջրվող տարածքի մակերեսը 250 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

$K1$ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 120 (առավելագույնը 120օր)

$U1 = 250 \times 0.0015 \times 120 = 45,0 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,4 \text{մ}^3/\text{օր:}$

Շինհրապարակի ջրցանը կատարվելու է պարբերաբար՝ 6տ տարողության ջրի սեփական

ցիստեռնով: Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Օգտագործվող նյութեր

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ, ճոպան,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- մետաղական կոնստրուկցիաներ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ,

Հաղորդակարերը լինելու են պողպատ-ալյումին :

Հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շահագործման փուլում բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում, գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Արևակայանն ապահովված է լինելու, արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Արարատի մարզի, Արարատ համայնքի լանջառ բնակավայրի Զորավար Անդրանիկի փ, 1/1 հասցեում՝ 7.00001 հատարածքը: Նախատեսվում է արևային ֆոտովոլտային 4,5ՄՎտ հզորության արևակայանի և 6300կՎԱ հզորության 35/08կՎ լարման ենթակայանի կառուցում: Համաձայն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի տեղեկանքի՝ օբյեկտի միացումն

իրականացվելու «Լանջառ» 35 կՎ օդային գծի թիվ 78 հենարանների հենամիջում նոր տեղադրված խարսխային հենարանին, կառուցելով մոտ 300մ 35կՎ էլեկտրահաղորդման գիծ:

Արևային ֆոտովոլտային կայանը արևային էլեկտրաէներգիայի լուծումներով էներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպավորելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում:

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել են արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չի առաջանալու: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ: Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Արևակայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու՝

- արևակայանի և ենթակայանի շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազան արտանետումների:
- Ջրային և հողային ռեսուրսների օգտագործման:
- Լանդշաֆտի, Կենդանական և Բուսական աշխարհի փոփոխությունների:
- Շինարարական թափոնների, Կայանի աշխատանքի ընթացքում և ապամոնտաժումից հետո առաջացող թափոնների կառավարման:
- Արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, կենսաբազմազանության փոփոխությունների, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

Շինարարության և շահագործման փուլեր:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ: Այդ նպատակով օգտագործվելու են տեխնիկատրանսպորտային միջոցներ:

11.1. Օդային ավազան.

Արարատի մարզն աչքի է ընկնում արևային էներգիայի պոտենցիալով՝ արևային էներգիայի տեխնոլոգիաների կիրառման համար:

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Աղյուսակ 9

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված:
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.101	0,0756
CH (ածխաջրածիններ)	0,243	0.000675	0.000505
NO ₂ (ազոտի օքսիդներ, էրկօքսիդի հաշվարկով)	42.3	0.117	0,087
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.0119	0,0089
Ծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Անկազմակերպ փոշու արտանետում		0,0469	0.105

1

Արևային կայանի համար նախատեսված տարածքը ամենամոտ բնակելի՝ Լանջառ բնակավայրից գտնվում է 0,2կմ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ: Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. Ելնելով գործունեության բնույթից, օդային ավազանի և կլիմայի

վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

11.2. Ջրային ռեսուրսներ.

Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ»ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրության՝ ստորգետնյա ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա՝ 10մ-ից խորը հորիզոններում: Գործունեության իրականացման հետևանքով մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտում չի կատարվելու, քանի որ տարածքում մակերևութային ջրահոսքերը բացակայում են: Ամենամոտ մակերևութային ջրային ռեսուրսը գտնվում է 2,6կմ հեռավորության վրա:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան ՋԹ ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարման աղբյուրը:

Կեղտաջրերի հեռացում. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի 2 հատ շարժական բիոզուգարան՝ 1,0*1,5 չափերի՝ լվացարանով:

Բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարական փուլում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի լինելու, ուստի արևակայանի շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

11.3. Հողային ռեսուրսներ.

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Համաձայն տարածքում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների հաշվետվության՝ գործունեության ենթակա տարածքում առկա է ավազակավի լցոնով հողաբուսաշերտ՝ 56,4մ³ ծավալով: Իսկ մալուխագծի և օդային գծի անցկացման տարածքներն համայնքային պատկանելության գյուղնշանակության հողատեսքեր են՝ արոտավայրեր: Մալուխագծերը և օդային գծերն անցկացվելու են

համայնքային հողատարածքներով, որի համար համայնքի հետ կկնքվի սերվիտուտի պայմանագիր: Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ:

Արևակայանի և ենթակայանի կառուցման ընթացքում հանվող գրունտի քանակը կազմում է ընդհանուր 520մ³, որից

- արևակայանի կետային հիմքերից՝ 360մ³,
- ենթակայանի 40մ³,
- խրամուղիների և այլն՝ 120մ³:

Հանվող հողային զանգվածը փովելու է տեղում, որից 45մ³ ծավալի հողային գրունտը կատարվելու է հետլիցք, իսկ 350մ³ մնացորդային գրունտի փովելու է տեղում: Իսկ 125մ³ ծավալի հողային գրունտը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Արևակայանի տարածքից հանվող բուսաշերտի ծավալը կազմում է 18.41մ³:

- ՕԳ-ի, մալուխագծի աշխատանքների ընթացքում կատարվելու է 890,2մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 863,5մ³-ն օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման նպատակով, իսկ մնացած 26,7մ³-ը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված աղբավայր:
- Ցանկապատի կառուցման ընթացքում՝ 7,2մ³, որից հետլիցք՝ 3,5մ³, ավելցուկային գրունտը՝ 3,7մ³:
- հաշվառքի հանգույցի տեղադրման համար՝ 45մ³:

Ընդհանուր հանվելու է 1,462.4մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 1307մ³-ը օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման նպատակով, իսկ մնացած 155,4մ³-ը տեղափոխվելու է մոտ 7կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ համայնքի համաձայնությամբ:

Տարածքում առկա է հողաբուսաշերտ օգտագործվելու է տարածքի բարեկարգման նպատակով: Հողային ռեսուրսները ադտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում են բնապահպանական կառավարման պլանով միջոցառումներ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում: Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում, դադարելու է գերարածեցումը, առաջանալու են ստվերային տարածքներ, առաջանալու է հողի խոնավության նոր ռեժիմ, նկատի ունենալով թվարկված փոփոխությունները, հնարավոր են հողի որակի առավել դրական փոփոխություններ:

11.4. Կենսաբազմազնություն.

Արևակայանի և ենթակայանի կառուցման տարածքը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր են՝ հողատեսքը էներգետիկայի: Տարածքն անտառածածկ չէ, բացակայում է ծառաթփային բուսականությունը, տեղ-տեղ առկա է խոտածածկ: Իսկ խրամուղիների և օդային գծերի անցկացման հողատարածքները համայնքային գյուղնշանակության հողատեսքեր են՝

արոտավայրեր: Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, քանի որ գործունեության ենթակա տարածքներն արդեն ենթարկվել են մարդածին ազդեցությանը, օգտագործվել են որպես արոտավայր:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլում՝ Արևային էլեկտրակայանի կառուցման արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի 30-40 տոկոսը: Մնացածը մասնակիորեն է ստվերվում, ընդ որում արևածագին և արևամուտին լուսավորվում է ամբողջովին՝ գտնվելով արևի ուղիղ ճառագայթների տակ: Նման պայմաններում զգալի ազդեցություններ չեն ենթադրվում:

11.5. Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի և կենցաղային ադրի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3-5-րդ դասերին:

Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995)՝ 8կգ, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝ 3կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝ 2կգ թափոնների տեսքով:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4) 5կգ/տարի:
- Շինարարական նյութերի մնացորդներ/ներառյալ շարքից դուրս եկած մեկուսիչներ/, գործունեության ընթացքում առաջացած շինարարական ադրի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 35մ³ ծավալով:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 155,4մ³:

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 3720կգ/տարի քանակով:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենաճանրաբեռնված հերթափոխի/,
 հետևաբար,

$$M=31*120=3720կգ/տարի$$

Նախատեսվող գործունեությունը տևելու է 7 ամիս, ուստի կենցաղային աղբի տարեկան քանակը կլինի ավելի քիչ:

Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 16,6տ քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորներում յուղերի քանակությամբ:

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4):

- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4):

- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3):

- Քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ (ծածկագիր՝ 35131200 01 99 5), չտեսակավորված այլումինի ջարդոն (ծածկագիր՝ 35310101 01 99 5, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 35310305 01 013) և այլն:

Այս թափոնների քանակական գնահատում՝ վթարների կամ վերանորոգման դեպքում հնարավոր չէ գնահատել, քանի որ այն հաշվարկվելու է կատարված փաստացի արդյունքներից:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Համաձայն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում «Հայաստանի հանրապետության Լանջառ բնակավայրի «Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձանների» հետ, գտնվում է վերջիններից բավական մեծ հեռավորության վրա:

Նկար 18



«Լառջ Էներջի» ընկերության կողմից Արարատ համայնքի Լանջառ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի հյուսիս-արևելյան հատվածը (օդալուսանկար)

Նկար 19



«Լառջ Էներջի» ընկերության կողմից Արարատ համայնքի Լանջառ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևելյան հատվածը (օդալուսանկար)

Նկար 20



Լուսանկար 4. «Լառջ Էներջի» ընկերության կողմից Արարատ համայնքի Լանջառ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի հարավային հատվածը (օդալուսանկար)



«Լառջ Էներջի» ընկերության կողմից Արարատ համայնքի Լանջառ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևմտյան հատվածը (օդալուսանկար)

Սույն թվականի ապրիլի 21-ին իրականացվել է տարածքի դաշտային-հնագիտական հետազոտություն: Տեղանքի հնագիտական ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այն ժամանակին ենթարկվել է մելիորացիայի, որոշ հատվածներում հարթեցվել և երկար տարիներ օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով: Ուստի, եթե այստեղ հնագիտական հուշարձաններ անգամ եղել են, ապա արտաքին նշաններ չեն պահպանվել: Մինչդեռ ուսումնասիրության ընթացքում պատմա-մշակութային որևէ միավոր կամ դրանց հետքեր չեն փաստագրվել փաստագրվել թե՛ տարածքում, թե՛ անմիջական հարևանությամբ առկա շերտագրական կտրվածքներում:

Ուստի Արարատ համայնքի Լանջառ գյուղի վարչական սահմաններում «Լառջ Էներջի» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված, ընդհանուրը՝ 7 հա մակերեսով տարածքը պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել:

11.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ.

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

11.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնաարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնաարավոր ռիսկերի առաջացում կապված.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ

օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),

- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Համաձայն կատարված «Հայր և որդի տիտուլյաններ» ՄՊԸ-ի ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել.

- հնարավոր հրդեհային իրավիճակների,
- կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակներով, օդափոխության և հակահրդեհային համակարգերով, տեսահսկման այլ ազդանշանային սարքերով:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

11.9. Աղմուկ և թրթռում.

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ տարածքում բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, մեքենաների աղմուկի մակարդակը չի

կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ 0,2կմ: Բացի այդ գործունեության ընթացքում աղմուկ առաջացնող շինտեխնիկայի օգտագործումը սահմանափակ է կամ քիչ հավանական, քանի որ կատարվելու են միայն հողային, բետոնապատման աշխատանքներ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Աղմուկի մակարդակը աշխատանքային գոտու տարածքում չի գերազանցի 50 ԴԲԱ:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից բավական հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակչության վրա:

Էլեկտրական և մագնիսական դաշտ:

Արևակայանը, ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան::

Արևային կայանի շինարարությունը և շահագործումը կատարվելու է ՀՀ կառավարության որոշումներով սահմանված տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

11.10. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

/Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն/.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված հետևյալ ռիսկերի հետ.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ էներգետիկայի, քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են

աշխատողների աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ, որից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ կամակերպում և աշխատանքի ընթացքում անվտանգության պահպանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:

Շինարարության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Կայանի կառուցման փուլում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

Շահագործման փուլում Արևակայանի, ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ոլորտին առնչվող ՀՀ օրենքների, կառավարության որոշումների, տեխնիկական կանոնակարգերի, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են միջոցառումներ, ուղղված՝ մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանմանը:

11.11. Սոցիալական ազդեցություն.

Գործունեությունն իրականացվելու է Արարատի մարզի Լանջառ բնակավայրի վարչական տարածքում: Գործունեության կից տարածքում գտնվում են համայնքային նշանակության և բնակիչների սեփականություն հանդիսացող հողատարածքներ: Օդային գիծն անցնելու է համայնքային հողատարածքով: Այդ նպատակով համայնքի հետ կնքվելու է սերվիտուտի պայմանագիր:

Նոր ենթակառուցվածքներ չեն նախատեսվում, գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհը: Նախատեսվող գործունեությունը համահունչ է «Հայաստանի հանրապետության Արարատի մարզի 2017-2025 թվականների ռազմավարական զարգացման ծրագիր»-ի դրույթներին: Համաձայն ծրագրի՝ նախատեսվում է մարզում կարողությունների, արդյունաբերության և այլ ոլորտների զարգացում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ:

Շինարարության փուլում բացվելու է մոտ 31 աշխատատեղ, որից 6-ը ինժեներատեխնիկական աշխատողները, 25-ը՝ բանվորներ: Աշխատելու են 8Ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ հերթափոխով:

Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ, կապված.

- Աշխատանքների իրականացման ընթացքում՝ արոտավայրերի, ճանապարհի հնարավոր խաթարումներ:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման և նոր աշխատատեղերի բացման հետ:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում լինելու են դրական սոցիալական ազդեցություններ, այն կնպաստի.

- Հայաստանի հանրապետությունում ներմուծվող էներգառեսուրսներից կախվածության նվազմանը, կանաչ էներգիայի զարգացմանը:
- Համայքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծմանը:
- Աշխատատեղերի բացմանը:
- Մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են 3-5 աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով:

Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Նախաձեռնողը նախատեսում է մասնակցություն ունենալ համայնքի զարգացման ծրագրերին, անհրաժեշտության դեպքում համայնքի բյուջե փոխանցել ֆինանսական միջոցներ, որոնք կնպաստեն համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

11.12. Լանդշաֆտ. Բարեկարգում.

«Լառջ Էներջի» ՍՊ ընկերության նախատեսվող Արևակայանը տեղակայվելու է Արարատի մարզի Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի վարչական տարածքում: Հողամասը զբաղեցնում է 7,0001հա տարածք:

Շինարարության փուլում լանդշաֆտի որոշակի փոփոխություններ կառաջանան պայմանավորված հողային աշխատանքներով, որոնք լինելու են ժամանակավոր:

Կայանի կառուցման արդյունքում տեղի կունենա լանդշաֆտի որոշակի փոփոխություն՝ պայմանավորված տարածքում ենթակայանի, արևային մոդուլների տեղադրումով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

11.13 Հողի տնտեսական վնասի հաշվարկ

Ենթակայանի և հենասյունների զբաղեցրած տարածքի 147 մ² մակերեսի համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն՝ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշումների:

ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԿԳ_{հող} = U_{բազա} \times U_{հող} \times Գգ,$$

որտեղ՝

ԿԳ_{հող}-ն գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

U_{բազա}-ն հողերի 1 մ² մակերեսի բազային արժեքն է՝ 336,6 դրամ,

U_{հող}-ն գնահատվող հողամասի մակերեսն է 147մ²,

Գգ-ն բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է: Արևակայանը կառուցվում է Լանջառ բնակավայրի վարչական տարածքում, որը գտնվում է XV -րդ գոտու սահմաններում՝ գոտիականության գործակիցն է՝ 0.0024:

$$ԿԳ_{հող} = 147 \times 336.6 \times 0.0024 = 118,7 \text{ դրամ}$$

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$U = ԾՀՎ + ԱՎՀ + ԾՈՒՎ,$$

որտեղ՝

Ա-ն ազդեցությունն է,

ԾՀՎ-ն վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են: Նման ծախսեր չեն նախատեսվում:

ԱՎՀ-ն վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում՝ ԿԳ_{հող}:

ԾՈՒՎ-ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախագծային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

$$U = ԾՀՎ + ԿԳ_{հող},$$

$$ԱՎՀ = 0 + 118,7 = 118,7 \text{ դրամ}$$

12. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)

Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության «Մինչև 2040 թվականը ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի» արևակայանների զարգացման (II. էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթությունները), ինչպես նաև էներգետիկայի զարգացման վերաբերյալ

ուղեցույցների, ազգային ստանդարտներին, շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգի (ՏԿ)-ի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու արևային կայանի և ենթակայանի կառուցման կառուցման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, կենսաբազմազանության, մարդու առողջության պահպանման հետ, թափոնների կառավարման, իսկ շահագործման փուլում՝ կայանի անվտանգ շահագործման հետ: Հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի իրականացման միջոցները ներկայացվում է նաև Բնապահպանական կառավարման պլանով՝ աղյուսակային տեսքով:

Շինարարության և շահագործման փուլեր.

12.1. Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով.

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կկատարվի փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները կփակվեն անջրթափանց թաղանթով,

- տարածքում նյութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,

- շինարարական տեխնիկական և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

12.2 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,

- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին,

- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացվելու են, ծածկվելու են անջրթափանց թաղանթով,

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,

- մալուխագծի անցկացման, օդային գծի հենասյունների տեղադրման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,

- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում,

- հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է տեղում՝ հետլցման և տարածքի հարթեցման, իսկ հողաբուսաշերտը՝ բարեկարգման համար,

- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,

- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանել գրունտային ճանապարհի վրա,

- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.

- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,
- ՕԳ-ի, մալուխագծի կառուցման ավարտից հետո՝ անմիջապես իրականացնել համայնքային հողերի վերականգնում:

12.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շշերով),
- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կդեղադրվեն ջրի ցիստեռն,

- ջրցանի և փոշենաստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոնոմացիայի տեղում՝ պայմանագրային հիմունքներով,

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- շինհրապարակում տրանսպորտային միջոցների անիվների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարաններ՝ դրենաժային համակարգով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

- բետոնի լցվածությունը պետք է լինի վերահսկելի՝ ճանապարհներին բետոնանյութի արտոնոսքը կանխելու նպատակով :

Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի բիոզուգարան:

Բիոզուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլ. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շէրով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոզուգարան),
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- արևային կայանի վահանակների մաքրումը անհրաժեշտության դեպքում կկատարվի չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:

12.4. Կենսաբազմազանություն.

Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնել համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

Շահագործման փուլ. Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

- ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով,

- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,

- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:

12.5. Թափոններ

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- ՕԳ-ի կառուցման տարածքում խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- նյութերի մնացորդները Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

-մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

-շինարարական թափոնները՝ շինադր, բետոնի մնացորդներ, կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- կենցաղային աղբը հավաքել աղբահավաք տարողության մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ խառնել կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխել աղբավայր:

Շահագործման փուլ. Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կառուցել 1 հատ՝ 16,6տ տարողության յուղընդունիչ (հոր)՝ տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է բետոնից, տեղադրվելու է տրանսֆորմատորների տակ:

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝

պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- կատարել կուտակվող թափոնների հաշվառում, գրանցում՝ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման պահանջներին համապատասխան,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված վահանակներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում մոտ 10մ² մակերեսով փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-տնակում՝ մինչև համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն 12 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած վահանակները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը, մասնավորապես համապատասխան մասնագիտական կազմակերպությունների ստեղծումը:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և ամենօր տեղափոխվելու է աշխատողների կողմից:

12.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով:

Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները,
- Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարության
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի

հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

Շահագործման փուլում պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցություն չի նախատեսվում, ուստի միջոցառումներ չեն նախատեսվում:

12.7. Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները,
- հնարավորինս բացառել աղմուկ և թրթռում առաջացնող մի քանի տեխնիկայի միաժամանակյա աշխատանքը,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով,
- ՕԳ-ի, Արևակայանի, Էնթակայանի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաճոպանների պարը, թրթռումը:

Շահագործման փուլ. Արևակայանի և Էնթակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից 0,2 կմ հեռավորության վրա, աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա, ուստի միջոցառումներ չեն նախատեսվում:

12.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով՝ 1 հատ, հակահրդեհային կրակմարիչներով՝ 6 հատ, տեղադրվելու են ջրի բաքեր,
- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն,
- տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և

պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել էլեկտահողորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը,

- հողային աշխատանքեր կատարելուց առաջ անհրաժեշտ է նախօրոք ստանալ կոմունիկացիաները շահագործող կազմակերպությունների համաձայնությունը,

- էլեկտրահաղորդման մալուխների ավտոմոբիլային ճանապարհների հատման դեպքում անհրաժեշտ է պահպանել ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմատիվային փաստաթղթերի պահանջները, ստանալ համապատասխան կազմակերպությունների համաձայնությունը,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել,

- տարերային երևույթների(քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

Շահագործման փուլ. արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանը և ենթակայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, ենթակայանի տարածքում՝ հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով,

- արևակայանի տարածքում տեղադրվելու են՝ ավտոմատ կառավարման համակարգեր, փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ՝ 12 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, լուսատուներ՝ 50Վտ հզորությամբ, 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ մուտքի մոտ,

- պարբերաբար ստուգել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,

- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

- պողպատե էլեմենտները ներկել մթնոլորտակայուն էմալով, շինարարական կոնստրուկցիաներն ապահովել հակակոռոզիոն պաշտպանությամբ,

- անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 3-5 աշխատողի միջոցով:

12.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, սոցիալական գործունեքը. Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության

նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շինհրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,

- օդային գծերի, մալուխային գծերի տեղադրումը կատարել, բացառելով էլեկտրահաղորդալարերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով,

- իրականացնել տեխնիկական վերահսկողություն՝ նախագծային անհամապատասխանությունները ժամանակին շտկելու նպատակով,

- աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստով: Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլ.

- հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում,
- ՕԳ-ի անվտանգության գոտու պահպանում՝ 15մ,
- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,
- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից:
- Էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման

- աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան,
- կիրառվող հաղորդակարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,
- պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով,
- էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:
- ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:

Սոցիալական գործունեքը. Գործունեության իրականացման ընթացքում սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.

- բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,
- աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:
- գյուղացիներին պատկանող հողատարածքներով օդային գծի և մալուխագծի անցկացման աշխատանքները կատարել բնակիչների համաձայնությամբ՝ սերվիտուտային պայմանագրի կնքումից հետո,
- գործունեության իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի համար առաջնահերթությունը տալ համայնքի բնակիչներին:

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի կողմից հարց բարձրացվեց և առաջարկվեց Ձեռնարկողին ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքին, մասնակցել համայնքում նախատեսվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ճանապարհների վերանորոգման, լուսավորության բարեկարգման աշխատանքներին և այլն:

Ձեռնարկողը պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերել համայնքին՝ պայմանագրային հիմունքներով, վերջինիս հետ փոխադարձ համաձայնությամբ ճշտել համայնքային խնդիրների աջակցման ուղղությունները:

12.10 Բարեկարգում և Լանդշաֆտ.

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,

- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտման, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,
- գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերելով հնարավորինս նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,
- մաքրվելու են պանելների մակերևույթները,
- արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է մետաղական ցանկապատով՝ դարպասներով:

Արևակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու են կամ լցվելու են մանրախճով:

Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու:

13. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը / Մոնիթորինգ/.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն:
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ շինարարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով:
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների

պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով:

- Տրանսպորտային միջոցների երթևեկության վերահսկում՝ դաշտային տարածքներում վերջիններիս տեղաշարժը վերահսկելու նպատակով:
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով:
- Անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում:
- Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն:
- Բարեկարգման աշխատանքների կատարման ապահովում, վերահսկում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը

14. Բնապահպանական կառավարման պլան

Աղյուսակ 10

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	<p>Շինարարությանփուլ</p> <p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով, -տարածքում նուրբերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, -շինարարական տեխնիկան և 	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

		<p>տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p> <p>Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:</p>		
2.	Հողային ռեսուրսներ	<p>Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն` ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, - բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը: - նախքան բերրի շերտի հանելը` հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին, 	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

		<ul style="list-style-type: none"> - ջրային և հողմնային հողատարումից գերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացվելու են, ծածկվելու են անջրթափանց թաղանթով, - արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով, - արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով, - Մալուխագծի անցկացման, օդային գծի հենասյունների տեղադրման աշխատանքերի ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ ծածկված վիճակում, - նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում, - հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է տեղում՝ հետլցման և տարածքի հարթեցման, իսկ բուսահողը՝ բարեկարգման համար, - ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր, - շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, 		
--	--	---	--	--

		<p>- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանել գրունտային ճանապարհի վրա,</p> <p>- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:</p> <p>Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <p>- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,</p> <p>- ՕԳ-ի, մալուխագծի կառուցման ավարտից հետո՝ անմիջապես իրականացնել համայնքային հողերի վերականգնում:</p>		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.</p> <p>- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու ռակի ջուր՝ բերովի(շշերով),</p> <p>- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կդեղադրվեն ջրի ցիստեռն,</p>	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

		<p>- ջրցանի և փոշենատեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոնոմացիայի տեղում՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,</p> <p>- շինհրապարակում տրանսպորտային միջոցների անիվների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարաններ,</p> <p>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,</p> <p>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի :</p> <p>Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրի հեռացման համար կտեղադրվի բիոզուգարան:</p> <p>Բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>Շահագործման փուլում Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.</p>		
--	--	---	--	--

		<ul style="list-style-type: none"> - աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շշերով, - աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոզուգարան), - բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, - արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի չոր եղանակով: 		
4	Կենսաբազմազանություն	<p>Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնել համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: <p>Շահագործման փուլում Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.</p>	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

		<p>- ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով,</p> <p>- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,</p> <p>- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:</p>		
5	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- ՕԳ-ի կառուցման տարածքում խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,</p> <p>- նյութերի մնացորդները (մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,</p> <p>- շինարարական թափոնները՝ շինադր, բետոնի մնացորդներ, կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,</p>	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

	<p>քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,</p> <ul style="list-style-type: none"> - կենցաղային աղբը հավաքել աղբահավաք տարողության մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ, - շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ խառնել կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխել աղբավայր: <p>Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - կառուցել 1 հատ 16,6տ տարողության յուղընդունիչներ (հոր)՝ տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է բետոնից, - հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին, - հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան 		
--	--	--	--

		<p>տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,</p> <ul style="list-style-type: none"> - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին, - յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: <p>Շահագործման փուլում առաջացող վնասված վահանակները կուտակվելու են պահեստում՝ փակ տարածքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:</p>		
6	<p>Պատմամշակութային բնության հուշարձաններ.</p>	<p>Լճնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազորմամբին:</p>	<p>Կապալառու</p>	<p>«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ</p>

		Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:		
7	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները, տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, - պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները, - ՕԳ-ի, Արևակայանի, ենթակայանի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը, <p>Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա,</p>	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

		<p>ուստի միջոցառումներ չեն նախատեսվում:</p>		
8	Արտակարգ իրավիճակներ	<p>Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով՝ 2 հատ, հակահրդեհային կրակմարիչներով՝ 6 հատ, տեղադրվելու են ջրի բաքեր, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն, - տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով, - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - ապահովել էլեկտահողորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, - էլեկտրահաղորդման մալուխների ավտոմոբիլային ճանապարհների հատման դեպքում անհրաժեշտ է պահպանել ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմատիվային փաստաթղթերի պահանջները, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները 	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

	<p>դադարեցնել,</p> <ul style="list-style-type: none"> - տարերային երևույթների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը: <p>Շահագործման փուլում արտակարգ իրավիճակներ կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - արևակայանն և ենթակայանն ապահովված են լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, - արևակայանի տարածքում տեղադրվելու են փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ՝ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, հրդեհաշիջման վահանակ՝ մուտքի մոտ, - պարբերաբար ստուգել աղետների հակազդելու համակարգերի աշխատունակությունը, - գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, - պողպատե էլեմենտները ներկել մթնոլորտակայուն 		
--	---	--	--

		<p>Էմալով, շինարարական կոնստրուկցիաներն ապահովել հակակոռոզիոն պաշտպանությամբ,</p> <ul style="list-style-type: none"> - անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է մշտական մոնիթորինգ: 		
9	<p>Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն</p>	<p>Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - շինհրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, 	Կապալառու	«ԼԱՌՋ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

		<p>- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,</p> <p>- օդային գծերի, մալուխային գծերի տեղադրումը կատարել, բացառելով էլեկտրահաղորդալարերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,</p> <p>- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները,</p> <p>- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով,</p> <p>- իրականացնել տեխնիկական վերահսկողություն՝ նախագծային անհամապատասխանությունները ժամանակին շտկելու նպատակով,</p> <p>- աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստով: Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին</p>		
--	--	---	--	--

